ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 43

ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված Հայաստանի Հանրապետության համայնքների /բնակավայրերի/ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով)

ՀՀ Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի գլխավոր հատակագծում փոփոխություն կատարելու վերաբերյալ

1. Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 54-րդ կետը՝ հանձնաժողովը տալիս է իր դրական եզրակացությունը ՀՀ Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի գլխավոր հատակագծում հետևյալ փոփոխությանը.

Հողամասերի առկա նպատակային և գործառնական նշանակությունը	**Փոփոխությունից հետո հողամասերի նպատակային և գործառնական նշանակությունը**
10-002-0016-0004 և 10-002-0588-0007 ծածկագրերով, 1224.8քմ ընդհանուր մակերեսով անտառային նշանակության, հողատեսքը՝ անտառ	10-002-0016-0004 և 10-002-0588-0007 ծածկագրերով, 1224.8քմ ընդհանուր մակերեսով էներգետիկայի, կապի,տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների, գործառնական նշանակությունը՝ էներգետիկայի

2. Հանձնաժողովը նշում է, որ հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով՝ ՀՀՇՆ 30-01-2014 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները:

3. Ջերմուկ համայնքի ղեկավարին առաջարկվում է.

- «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14^3–րդ հոդվածի 30-րդ մասով սահմանված կարգով նշված փոփոխություններն արտացոլել համայնքի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում,
- ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել ՀՀ Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի հաստատված գլխավոր հատակագծում սույն որոշումից բխող փոփոխությունները:

Հանձնաժողովի նախագահ՝		
ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահի առաջին տեղակալ		Ա. Բաղայան
Հանձնաժողովի քարտուղար՝		
ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետ		Ա. Հախումյան

Երևան, ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտե, 5.04.2018թ